ՀԵՅԴԱՐ ԻՄԱՆՅԱՆ
HEYDAR IMANYAN

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՎԱԾ ԵՎ ՉԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՎԱԾ ԶՈՒՅԳԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ՀՈՒԶԱԿԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կյանքում կտրուկ բարձրացել են ամուսնալուծությունների ցուցանիշները և խարխլվել ընտանիքի հիմքերը, քանի որ մեր օրերում տեղի են ունենում խորքային գործընթացներ և սոցիալ-տնտեսական ու մշակութային բազմակողմ փոփոխություններ, ինչպես օրինակ՝ զենդերային դերերի փոփոխություն, ամուսնալուծությունների տարածում և հաճախականություն, կանանց ֆինանսական ու սոցիալական անկախություն և այլն: Ընտանիքի ամրապնդման և ամուսնալուծությունների կանխարգելման ուղղությամբ նշանակվից դեր կարող են ունենալ ճանաչողական և հուզական հմտությունների ու կարողությունների իմացությունը և ուսուցումը

Հետազոտություններն ու դիտարկումները մատնանշում են հուզական կարողությունների և օժտվածության անհերքելի դերը հոգեկան առողջության, միջանձնային հարաբերությունների բարելավման, հույզերի ու զգացմունքների կառավարման և վերահսկման, կազմակերպությունների և կառույցների արդյունավետության բարձրացման, ամուսնական բավարարվածության, ընտանեկան կյանքի հագեցման, աշխատանքային առաջադիմության և, ընդհանրապես, անհատական հաջողությունների մեջ:

Հուզական ինտելեկտը սոցիալական ինտելեկտի մի ձև է, այն ներառում է անձի կողմից սեփական և այլոց հույզերն ու զգացմունքները հասկանալու, ճանաչելու և կառավարելու կարողությունը և այդ ինֆորմացիայի օգնությամբ սեփական միտքն ու գործը ուղղորդելու ունակությունը: Հուզական ինտելեկտը ներառում է այնպիսի կարողություններ, որոնց օգնությամբ մարդը կարող է կարգավորել և կառավարել իր հույզերն ու զգացմունքները:

Մեր աշխատության նպատակն է ուսումնասիրել հուզական ինտելեկտի ազդեցությունը ամուսնական կյանքում և ամուսինների փոխհարա-

բերություններում ամուսնալուծված և չամուսնալուծված զույգերի օրինակով դիտարկելով նաև ճանաչողական ինտելեկտի դերը և ազդեցությունը:

Հետազոտության բազան կազմում են Իրանի Քաշան քաղաքի ամուսնալուծված և չամուսնալուծված բոլոր զույգերը, որոնց միջից ընտրվել է նմուշային խումբը կամ ընտրանքը: Փորձարկվող բազայի ծալավի հիման վրա ընտրվել են 30 ամուսնալուծված զույգեր և 30 սովորական չամուսնալուծված ամուսիններ, ընտրությունը կատարվել է պատահականության սկզբունքով:

Հետազոտության մեթոդը միասնության կամ կոորելացիայի մեթոդն է: Այս մեթոդը նպատակահարմար է այն հետազոտությունների համար, որտեղ քննվում և բացահայտվում են տարբեր փոփոխականների միջև փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները, ինչի համար կիրառվում է փոխկապակցվածության կամ կոորելացիայի գործակիցը: Փոխկապակցվածության կամ կոորելացիայի մեթոդը ուսումնասիրում է մեկ կամ մի քանի գործոնների փոփոխությունների միջակայքը մեկ կամ մի քանի այլ գործոնների համեմատությամբ:

Բնութագրական վիճակագրության տվյալները ներկայացվել են մի շարք ցուցանիշներով, ինչպես օրինակ միջին, շեղում ստանդարտից, աղյուսակներ: Երկրորդական մշակման, այսինքն փոփոխականների միջև կապակցվածության առկայության կամ բացակայության քննության համար կիրառվել է միասնության գործակիցը: Տվյալները ենթարկվել են համակարգչային SPSS ծրագրի մշակման:

Հետազոտության տվյալների հավաքագրման նպատակով օգտվել ենք *Բար-Անի հուզական ինտելեկտի գնահատման հարցաթերթից:*

Բար-Անի հուզական ինտելեկտի փորձարկումը սկիզբ է դրվել 1980 թվականին նպատակ ունենալով պատասխանել հետևյալ հարցադրմանը. «Ինչո՞ւ մի խումբ մարդիկ մյուսների համեմատությամբ ավելի հաջողակ են»:

Հարցաթերթը բաղկացած է 90 հարցերից (հարցաթերթի բնօրինակ տարբերակը ներառում է 133 հարցեր, որոնք ստանդարտացվել են Իրանում և վերածվել 90 հարցերից կազմված հարցաթերթի): Բար-Անի հարցաթերթը թարգմանվել է աշխարհի ավելի քան 200 լեզուներով և նրա ստանդարտեցված տվյալները հավաքագրվել են 5 երկրներում, ուսումնասիրվել ու հաստատվել են դրանց հավաստիությունն ու
վստահելիությունը:

Աղյուսակ 1. Ամուսնալուծվածների և չամուսնալուծվածների ճանաչողական ինտելեկտի միջին մակարդակը և շեղումը ստանդարտից

Խմբեր	Քանակ	Միջին	Շեղում ստանդարտից
Չամուսնալուծված	60	114.55	6.28
Ամուսնալուծված	60	109.38	4.08

Ինչպես ցույց են տալիս վերոբերյալ աղյուսակի տվյալները, չամուսնալուծվածների ճանաչողական ինտելեկտի միջինացված միավորը հավասար է 114.55-ի, իսկ ամուսնալուծվածների ճանաչողական ինտելեկտի միջին միավորը կազմում է 109.38, հետևաբար չամուսնալուծվածների ճանաչողական ինտելեկտի միջինացված միավորն ավելի բարձր է, քան ամուսնալուծվածներինը:

Աղյուսակ 2. Ամուսնալուծվածների և չամուսնալուծվածների ճանաչողական ինտելեկտի միջին միավորների t փորձակման արդյունքները

Խմբեր	Քանակ	Միջին	Շեղում ստանդարտից	t –ի քանակը	Ազատության աստիճան	Նշանակալիության մակարդակ
Չամուսնալուծված	60	114.55	6.28	5.39	118	0.00
Ամուսնալուծված	60	109.38	4.08			

Վերոբերյալ աղյուսակում արտացոլված են t սդուտենտի փորձարկման արդյունքները: t սդուտենտը հավասար է 5.39-ի, իսկ նշանակալիության մակարդակը հավասար է sig=0.00: Քանի որ P<0.05 է, ուրեմն կարելի է եզրակացնել, որ ամուսնալուծված և չամուսնալուծված զույգերի ճանաչողական ինտելեկտի
մակարդակների միջև կա նշանակալի տարբերություն:

Աղյուսակ 3. Ամուսնալուծվածների և չամուսնալուծվածների հուզական ինտելեկտի միջին միավորները

Խմբեր	Քանակ	Միջին	Շեղում ստանդարտից
Չամուսնալուծված	60	354.35	16.07
Ամուսնալուծված	60	293.83	9.64

Ըստ վերոբերյալ աղյուսակի, չամուսնալուծվածների հուզական ինտելեկտի միջին միավորը կազմում է 354.35, իսկ ամուսնալուծվածների հուզական ինտելեկտի միջին միավորը 293.83 է, հետևաբար չամուսնալուծվածների հուզական ինտելեկտի մակարդակն ավելի բարձր է, քան ամուսնալուծվածներինը:

Աղյուսակ 4. Ամուսնալուծվածների և չամուսնալուծվածների հուզական ինտելեկտի միջին մակարդակների t փորձարկման արդյունքները

Խմբեր	Քանակ	Միջին	Շեղում ստանդարտից	t	Ազատության աստիճան	Նշանակալիության մակարդակ
Չամուսնալուծված	60	354.35	16.07	25.00	118	0.00
Ամուսնալուծված	60	293.83	9.64			

Վերոբերյալ աղյուսակում t սդուտենտը հավասար է 25.00, իսկ նշանակալիության
մակարդակը հավասար է sig=0.00: Քանի որ P<0.05–է , հետևաբար կարելի է եզրակացնել, որ ամուսնալուծված և չամուսնալուծված անձերի հուզական ինտելեկտի
մակարդակների միջև կա նշանակալի տարբերություն:

Փորձարարական հետազոտության մեջ ուսումնասիրել ենք նաև ամուսնալուծված և չամուսնալուծված զույգերի տարբեր խմբերում հուզական ինտելեկտի և ճանաչողական ինտելեկտի մակարդակը և գրանցել հետևյալ արդյունքները.

•Ամուսնալուծվածների և չամուսնալուծվածների ճանաչողական ինտելեկտի մակարդակների միջև ըստ նրանց տարիքային խմբի չի գրանցվել նշանակալի տարբերություն: Ամուսնալուծվածների և չամուսնալուծվածների տարիքային տարբեր խմբերում հուզական ինտելեկտի միավորների միջև ևս չի արձանագրվել նշանակալի տարբերություն:

•Ամուսնալուծվածների և չամուսնալուծվածների ճանաչողական ինտելեկտի մակարդակը չի տարբերակվում ըստ նրանց ունեցած աշխատանքի, սակայն հուզական ինտելեկտի մակարդակը տարբերակվում է ըստ աշխատանքի:

•Ամուսնալուծվածների և չամուսնալուծվածների ճանաչողական ինտելեկտի մակարդակը տարբերակվում է ըստ նրանց կրթության մակարդակի, սակայն հուզական ինտելեկտի մակարդակը նշանակալից տարբերություն չի գրանցել ըստ փորձարկվողների կրթության մակարդակի:

Ամուսնական կյանքի հարստացման ու հագեցման նպատակով մշակվել են հուզական ինտելեկտի ուսուցման հոգեբանական ու խորհրդատվական ծրագրեր և թրեյնինգ-դասընթացներ, որոնք նպատակ ունեն օգնել զույգերին ճանաչելու սեփական անձը, մեկը մյուսի զգացումները, հույզերն ու ապրումները, խորացնել մտերմությունն ու ապրումակ-

ցումը, սովորել ներգործուն փոխհարաբերություններ ծավալելու ձևերը և ձեռք բերել պրոբլեմների լուծման հմտությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Bar-on,R.(1997). ***The Emotional Quotient Inventory (EQ-I); A measure of emotional intelligence.*** Toront, Canada: Multi- Health systems.

2. Bar-on,R. (1999). ***The Emotional Quotient Inventory (EQ-I); A measure of emotional intelligence*** (2th ed.) Toronto, Canada: Multi-Health Systems.

3.Goleman,D. (1995). ***Emotional intelligences: the theory in practice.*** NewYourk: basic book.

4.Գոլման Դ., Հուզական ինտելեկտ, Թարգմանիչ Փարսա Ե., Ռոշտ հրատարակչություն, Թեհրան. 2008թ.:

5.Գլադինգ Ս., Ընտանիքի թերապիա պատմություն, տեսություն և կիրառում, թարգմանիչներ Բահարի Ֆ. Բահրամի Ֆ., «Թազքիյե» հրատարակչութ.,Թեհրան. 2003թ.:

Analyses of research results about EQ and IQ effect on the relationships of divorced and non-divorced couples

In the article we consider the effect of emotional intelligence of divorced and non-divorced couples also observing the role and effect of cognitive intelligence. Base of the research forms all the divorced and non-divorced couples of Kashan city, Iran, among whom the sample group was chosen. 30 divorced and 30 non-divorced couples were chosen, the choice was made randomly. For data collecting evaluation questionnaire of Bar-on emotional intelligence was used.